

3(696)

2024

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

# ԼՍԱՐԱՐ

Հանաչել զինաստրուբին եւ գիտար, իմանալ զբանս հանձարոյ

Лусарар

ԿՐԹԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՈՂԲԱՆԵ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵՎ ԿՈՉԵՆԵ ԱՊՐՈՂԱՑ

Հրանտ Դինքը ժամանակին ասում էր, որ եթե թուրքերը հայերին ոսկե օդանավերով տեղահանեին, միևնույն է, դարձյալ դա կհամարվեր ցեղասպանություն:

Ազգերը, որոնք ցեղասպանության են ենթարկվել, մարդկության դեմ գործած ոճրագործության մասին այլ պատկերացում ունեն, քան երբևէ ջարդ չտեսած ազգերը: Դա բնական է, որովհետև ցեղասպանությունը համազգային ողբերգություն է, որի պարտադրած ցավը սերնդեսերունդ չի անցնում: Արցախցիներն էլ, որպես հայ ժողովրդի պատմական տարածքի մի հատվածում բնակվող հանրություն, միշտ իրենց մեջ արթուն են պահել եղեռնացավը: Իսկ 2023 թվականի սեպտեմբերյան իրադարձությունները վերստին հաստատեցին հրանտոյի քննարկումները: Առաջին հարցը, որ հարկադրված ժողովրդի կտրելը, անկախ նրանից, թե ինչ մեթոդներով է դա իրականացվել, նույն ցեղասպանությունն է:

Բռնատեղահանումից ընդամենն օրեր առաջ ՌԴ նախագահ Պուտինը, հրապարակավ մեկնաբանելով Լեռնային Ղարաբաղում նախապատրաստվող էթնիկ զտումների մասին ահազանգը, հույս է հայտնել, որ այդ գործընթացը փափուկ կընթանա, որպիսին իրեն խոստացել է Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևը: Եվ եթե հետադարձ արցախահայերի ֆիզիկական զանգվածային բնաջնջում չի իրականացվել, և ռուսներն ու ազերիները ոսկե օդանավերով չեն տեղահանել արցախահայությանը, բնավ չի նշանակում, թե Լեռնային Ղարաբաղում ցեղասպանություն չի կատարվել այն հատկանիշներով, որոնք սահմանված են ՄԱԿ-ի՝ 1948 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունած Կոնվենցիայով:

Փաստերը, ինչպես ասում են, անողորմ են, և հավատանք, որ դրանց պատշաճ գնահատական կտրվի՝ այս անգամ ոչ թե մեմեսիսյան թրով, այլ միջազգային արդարադատության խստությանը: Դա ժամանակի խնդիր է, իսկ ստույգ դեպքում մեզ մտահոգող ոչ պակաս կարևորության հարցն է՝ ինչո՞ւ է նույն ազգը հարյուր տարի անց վերստին ենթարկվում ցեղասպանության: Պատմության դա՛սն էր անհանդիչ, թե՛ ունակ չենք պատմությունից ճիշտ դասեր քաղելու: Եթե պատմությունը բավարար կռվաններ չունի, ուրեմն այն թերի է ու հարկավոր է ճշմարտության զննանում ավելի կոպիտ այդ կռվանները: Իսկ եթե ճիշտ դասեր չենք կարողանում քաղել, անհրաժեշտ է ուժեղացնել ազգային գաղափարախոսությունը: Ամեն ազգ ունենում է այն արժեքները, որոնց շուրջ հյուսվում է իր գաղափարաբանությունը: Հնարավոր է, մենք մոռացել կամ թերագնահատել ենք մեր իրական արժեքները, և պետք չէ ներկա դեպքում մեղքն ուրիշների վրա բարդել: Բնության մեջ ոչ ոք և ոչինչ թույլ չի ծնվում, այդպիսին դառնում են ստույգ իրավիճակում: Թող ներվի, սակայն մատաղացու խոյն անգամ հարկ եղած դեպքում խոյահարել գիտե:

Արդյո՞ք սա մեր վերջին ցեղասպանությունն էր, թե՞ պատմության մի որոշակի փուլում դարձյալ համազգային ցնցումներ կապրենք. ամեն ինչ կախված է մեզանից: Մենք մեր ապագայի տատմերն ու ավա՞ղ նաև գերեզմանափորը կարող ենք դառնալ: Մենք՝ բոլորս միասին:

Ուրեմն, կրկին ողբանք նահատակաց և կոչենք ապրողաց...

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ՄԻԿԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

## ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱՈՋ

Ժայռի նման է այս հին բարբառը,  
Ժայռի պես կոշտ է, չըհրդկված.  
Ու ժայռի պես էլ կարծր է, համառ է,

Զի՛ պոկի նրան ոչ մի հարված.  
Շուրթերի վրա այնպես է բառը,  
Ինչպես որ ժա՛յռն է հողում խրված...



Երուսաղեմում՝ Հորդանան գետի ափամերձ պատին տարբեր լեզուներով, այդ թվում՝ հայերեն՝ գրաբար և աշխարհաբար լեզվով, գրված է Աստվածաշնչից հատված՝ Հիտուս Քրիստոսի՝ Հորդանանում մկրտվելու մասին: Առանձին պատատու կա նաև Արցախի բարբառով: Լուսանկարում՝ արցախցի գրոսաշրջիկներ Միքայել Ղադայանը և լրագրող Սելանյա Միլոնյանը ծանոթանում են այդ գրություններին:

Լուսանկարը՝ Ս. Խաչատրյանի, 2017թ.

## «ԱՐՑԱՒԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱՈՋ», ՀԱՏՈՐ 14

Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) հիմնադրման 50-ամյակի առթիվ 2019թ. հոկտեմբերին համալսարանի գիտ-խորհուրդը որոշում էր ընդունել հրատարակել «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը՝ 20 հատորով: Մինչև Արցախի հայաթափումը հրատարակվել էր 13 հատոր: Առաջին 6 հատորը նվիրված է Արցա-

«Արցախի ժողովրդագիտությունը. Ղարաբաղի բարբառը» մատենաշարի 14-րդ հատորը լույս է տեսել ճանաչված գործարար Գագիկ Ծառուկյանի ֆինանսական աջակցությամբ: Լ. Ղարախանյանը նաև արժևորեց մեր ժողովրդի ներկայիս էքզիստենցիալ լարվածության պայմաններում Գագիկ Ծառուկյան մեկնեսսի հերթական

յանն առանձնակի ջերմությամբ է վերաբերվում բոլոր այն նախաձեռնություններին, որոնք կապված են Արցախի հետ. «Այսօր առավել քան երբևէ կարևորվում է Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը. դա բարբառն է, մշակույթը, ավանդույթները, խոհանոցը: Ոչ նյութական մշակութային ժառանգության պահ-




խի ազգագրությանը, հաջորդ 7 հատորում Արցախի բանահյուսական նյութերն են: Օրերս լույս է տեսել 14-րդ հատորը, որի շնորհանդեսը կայացավ Հովհաննես Թումանյանի թանգարանում (ժամանակավորապես տեղակայված է «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանում): Միջոցառումը վարող՝ Հովհ. Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանն իր բացման խոսքում նշեց, որ պատահական չէ ընտրվել շնորհանդեսի անցկացման վայրը: Ամենայն հայտք բանաստեղծն անչափ կարևորում էր բանահյուսությունը, որը, նրա համոզմամբ, ժողովրդի հետ մերձեցանալու, ժողովրդի մեջ լինելու միջոց է: Նրա ստեղծագործությունների հիմնական մասը ստեղծվել է բանահյուսության հենքի վրա: Եզակի է եղել բանահյուսությունը զննատեղի և այն ստեղծագործություններին ծառայեցնելու նրա խորհուրդը: Ինքը՝ Թումանյանը, տարբեր տեղերից հավաքում էր բանահյուսական նյութեր, անգամ՝ եղեռնի սոսկալի օրերին:

բարեգործական քայլը: «Դա նշանակում է նպաստել հոգևոր վերելքին, մեր ինքնագիտակցության ամրապնդմանը», - ասաց նա:

Շնորհանդեսին ներկա էր նաև Գագիկ Ծառուկյանի կինը՝ Ջավահիր Ծառուկյանը: «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի համակարգող Իվետա Տոնոյանը ներկայաներին ողջունեց Արցախի բարբառով՝ ի նշան միջոցառման բովանդակության և այն իրողության, որ պարոն Ծառուկ-

յանությունը բացարձակ առաջնահերթություն է մեզ համար: Անցած տարի Արցախի հայաթափումից հետո մենք պետք է անենք ամեն ինչ այդ ժառանգությունը պահպանելու, մեր սերունդներին փոխանցելու համար: Իհարկե, բարբառը գոյատևում է իր հայրենի միջավայրում, երբ որ գործածվում և տարածվում է այն միջավայրում, որտեղ ապրել, արարել, ստեղծագործել են այդ մարդիկ: Եվ եթե հարցնենք՝ Արցախի բարբառից ամենից տարածված խոսքը ո՞րն է, վստահ եմ՝ ասելու են՝ լոխ լյավա: Ուզում եմ հույս ունենալ, որ առաջիկայում լոխ լյավա լինելու, և Արցախի բարբառը հնչելու է Արցախի մայր հողում», - ասաց նա:

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը լույս է տեսնում բ.գ.թ., ողջոցնա, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Արմեն Սարգսյանի աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ:



ՃԱՆԱԳԵՆԷ ՄԵՐ

ԱՆՍԱԼԵ ՄԵՐ ՄԵՇԵՐԻՆ

Որքան էլ բռնատեղահամվածներին մոտ անկումային տրամադրությունները գերիշխեն, թբիլիսի եռօրյա զբոսաշրջության մեկնելու պատեհ առիթը բաց թողնել չէր կարելի: Կոնկրետ տողերիս հեղինակի համար այդպես էր, քանի որ մեծ էր ցանկությունը այցի գնալ Ամենայն հայոց բանաստեղծի գերեզմանին: Հովհաննես Թումանյանը միշտ մեզ հետ է, մեզ ուղեկցում է կյանքի բոլոր ոլորտներում և իրավիճակներում: Նրա պարզ, միևնույն ժամանակ խորախորհուրդ, հոգին սնուցող խոսքի ուժի պահանջը զգում ենք ամեն պահի, այսօր՝ առավել շատ:

Թումանյանի գերեզմանը գտնվում է Թբիլիսիի Հավլաբար թաղամասում գտնվող հայկական պանթեոնում, որը հայտնի է հնոցիվանք անունով:

Ո՞վ էր հնոցին, որի անունով այստեղ գերեզմանատուն է կառուցվել: Պատմությունն այսպիսին է: 1600-ական թթ. վրացական արքունիքում Աշխարիբեկ Բեյբուրով անունով մի գանձապահ կար, որին լավ ծառայության համար արքան թույլ է տվել գնել հողակտոր և կառուցել այնտեղ եկեղեցի: Եվ նա կառուցում է սուրբ Մարիամ Աստվածածին տաճարը, որտեղ նաև տոհմական գերեզմանատուն է ստեղծում, որը հետագայում դառնում է ամենամեծ քրիստոնեական գերեզմանատունը: հնոցի անունը, որը նշանակում է մեծ, հզոր, նա ստացել է արքայի կողմից: Եկեղեցին այդ օրվանից ժողովրդի կողմից կոչվում է հնոցիվանք:

Խորհրդային տարիներին թիրախավորվեցին բոլոր եկեղեցիները. դրանք պայթեցվում և ավերվում էին: Նույն բախտին արժանացավ նաև սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին: «Պլանի տակ» էր ընկել ամբողջ տարածքը: ԽՍՀՄ պետական անվտանգության գլխավոր հանձնակատար Լավրենտի Բերիան որոշել էր, որ պետք է այդտեղ կառուցվի Բարեկամության այգի: Եվ առաջին անգամ (տարածքը երկու անգամ է քանդվել. 2-րդ անգամ՝ Սամբայի՝ Սուրբ Երորդություն եկեղեցու կառուցման ժամանակ) քանդվում է ամբողջ եկեղեցին ու գերեզմանատունը, որտեղ թաղված էին Թումանյանը և մյուս մեծերը: Նրանց աճյունները տեղափոխվեցին ներկայիս տարածք: Թումանյանից սկսվեց գերեզմանների տեղափո-

խումը: Անվանի գեղանկարիչ Վևորգ Բաշինջադյանը, որը մի փոքր շուտ էր իմացել գերեզմանատան քանդվելու ծրագրի մասին, Թումանյանի կնոջը՝ Օլգային, առաջարկում է նրա աճյունը տեղափոխել Երևան: Օլգան հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ դա ճիշտ չի լինի, քանի որ այնտեղ միայն իր ամուսինը չէ ամ փոփված, այլև մեր մյուս մեծերը. կամ բոլորին պիտի տեղափոխեն կամ ոչ մեկին: Հետո արքայի օրոքը և տեսնում են, որ Րաֆֆուն և Կոնյուսյանը ամ հարձանի կողքը և ընդհանրապես այդ տարածքն ամբողջում է: Սկզբում տեղափոխում են Թումանյանի աճյունը: Րաֆֆուն մահարձանի աջ կողքին Թումանյանի գերեզման է, ձախ կողքին՝ Սուրբուկյանի: Այնուհետև տեղափոխում են մյուսների աճյունները: Շատ տապաններ կան, որոնց տակ ուղղակի հող է, մասունք չկա: 1962թ. ընդարձակ հնոցիվանքի գերեզմանատան տարածքից հավաքված 32 շիրմաքար իրար մոտ հավաքելով՝ հիմնվեց Հայ գրողների և հասարակական գործիչների պանթեոնը:



Գերեզմանոցը եղել է հայ համայնքի հովանավորության ներքո, հետո՝ եկեղեցու: Այսօր նաև դեսպանությունն է տիրում:

թյուն անում, բայց առհասարակ այն գտնվում է քաղաքապետարանի պատասխանատվության ներքո:

1995թ. նախկին Խոջիվանքի տարածքում սկսվեց Սամբայի շինարարությունը: Ականատեսների վկայությամբ՝ այդտեղից հողի փորման ժամանակ դեռ ոսկորներ էին դուրս գալիս: Ասում են՝ տաճարի խաչի տեղադրման ժամանակ 6 հոգի ընկել և մահացել են: Գո՞ւցե Աստուծո պատիժն էր: Տաճարը, որը Ամերկովկասի ամենամեծ քրիստոնեական կառույցն է (ու՛նի 101մ բարձրություն, այդքան էլ՝ գետնի տակ), գործում է, բայց նրա շուրջը դեռ 6 եկեղեցի էլ պետք է կառուցվեն: Աստված չանի, որ հայ մեծերի պանթեոնը նորից «պլանի տակ» ընկնի:

Մեր մեծերի շիրմներին ծաղիկներ խոնարհելիս ակամայից նրանց խոսքերն էին միտքս գալիս. «Մտածումներ կան, որ սաստիկ ծանր են, բայց դուք դատապարտված եք մտածելու, չեք կարող փախչել նրանցից: Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակեցնեմ մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և մեր սրտերում, և աշխարհի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե էլ փրկարար գիտակցությանը կհետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը»:

Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած» (Թումանյան):

«Մենք հայ ենք, Աստուծո անձեքը գրած է մեր ճակատի վրա: Ամբիաբանությունը, երկպառակությունը, նախանձը, թշամոթությունը և հազար ու մեկ այս տեսակ չարություններ շատ ժամանակներից բույն են դրել մեր հոգու մեջ, և մենք կրում ենք այդ մեղքերի պատիժը: Թշամանի մեղավոր չէ, եթե մեր մեջ սիրտ լիներ, միություն լիներ, հիմար թշամանի ի՞նչ կարող էր անել» (Րաֆֆի):

Դժբախտաբար մույնը շարունակվում է: Մինչև ե՞րբ ...

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԱՐՑԱՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՔԱՆԸ», ՐԱՏՈՐ 14

1 33 ՉԱԼԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն Տորե Դալալյանը նշեց, որ բարեխառնարթ թե դժբախտաբար մեկ տարուց ավելի Ա. Սարգսյանն իրենց գործընկերն է: Գիշտ է, միշտ համագործակցել են հեռավորության վրա, քանի որ Հայաստանում այնքան էլ շատ չեն բանագետները, բարբառագետները և ավելի լայն առումով՝ ժողովրդագետները: Բայց հայտնի իրադարձությունների բերումով Ա. Սարգսյանն այժմ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող է և տարիների ընթացքում իր կուտակած հարուստ պաշարով հարստացնում է ինստիտուտի գիտական ներկայանակը: «Մենք միշտ ունեցել ենք տարբեր տարածաշրջանների բանահյուսությանը և ազգագրությանը զբաղվող մասնագետներ, այդ թվում՝ Արցախի վերաբերյալ, բայց մարդ, որն իր կյանքի հիմնական մասն ապրել է Արցախում և զուգահեռաբար միշտ նյութեր է հավաքել, իրականում քիչ է եղել: Արմեն Սարգսյանի հիմնական առավելությունը հենց այն է, որ տեղում լինելով՝ մշտապես իր ձեռքը պահել է զարկերակի վրա, այսինքն՝ լավ քաջատեղյակ է տեղական ավանդույթներին, ազգագրական վերափոխումներին, բարբառային, բանահյուսական նորամուծություններին», -ասաց Տ. Դալալյանը: Միևնույն ժամանակ նշեց, որ այդ հատորները միայն Ա. Սարգսյանի հավաքած նյութերը չեն: Այդտեղ անփոփված են նաև նախորդ հետազոտողների, բանահավաքների, բանագետների, բարբառագետների, ազգագրագետների հավաքած հարուստ տեղեկությունները՝ գիտականորեն դասակարգված և խմբավորված: «Սակայն այդպես, իհարկե, կարող էր անել միայն գիտակ մարդը, որն այդ ոլորտի մեջ է, շատ լավ գիտի, թե ինչ է արվել մինչև հիմա և ինչ պետք է արվի: Գիտության զարգացման հիմնական գրավականներից մեկն էլ հենց դա է՝ իմանալ, թե ինչ է արվել, երբեք չուրանալ՝ ինչ նախորդները կուտակել են: Գրել են և դասակարգել, և հետո միայն դրա վրա ավելացրել իրենց կողմից այն բարերը, որոնք դեռևս չեն ավելացվել, որոնք դեռևս պակասում են՝ ունենալու համար ամբողջական կառույցը», - շարունակեց Տ. Դալալյանը: Որպես ցանկություն նաև հայտնեց, որ բացի հուն դաշտային

նյութից, նաև նախորդ ուսումնասիրությունների հատորներից, կարիք կա հետազոտական, վերլուծական ուսումնասիրությունների, և այդ ամենը ներկայացնել ոչ միայն հայերենով, այլև սուրբ լեզուներով, որովհետև «Արցախը միշտ մեզ հետ է՝ անկախ քաղաքական իրավիճակներից: Մենք նաև աշխարհին ապացուցելու, ցույց տալու այդ առաքելությունն ունենք, որ մենք տեր ենք մեր ժառանգությանը, մենք դրանից երբեք չենք հրաժարվում, և այդ ժառանգության մեջ իր կարևոր տեղն ունի նաև ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Ի տարբերություն նյութականի, որը կարելի է ոչնչացնել, ջարդել, ջնջել երկրի երեսից, ինչը որ հիմա մենք տեսնում ենք, ոչ նյութականը շատ ավելի դժվար է վերացնելը, և դրա վերացման պատասխանատունն էլ կլինենք: Դա արդեն լրիվ կախված է մեր ջանքերից, մեր նպատակներից: Գիշտ է, որ Արցախի բանահյուսության զարգացման համար անհրաժեշտ է միջավայր, բայց հավելյալ ջանքերի դեպքում կարելի է այդ միջավայրը ինչ-որ ձևերով պահպանել: Կարելի և հնարավոր է անել, և պետք է բոլոր միջոցները գործադրել դա անելու համար»:

Շնորհանդեսին ողջույնի և գնահատանքի խոսքեր հղեցին 33 ՉԱԼ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի ղեկավար Ա. Հոբոսյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Սոկրատ Խանյանը, բ.գ.թ., դոցենտ Տաթև Սողոմոնյանը:

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը կազմող Արմեն Սարգսյանն իր ելույթում ասաց, որ 14-րդ հատորը իր կազմած, խմբագրած, հրատարակած 38-րդ գիրքն է: Միջոցառումը կարևորեց ոչ միայն նրա համար, որ դրական բարեմաթթվանքներ են հնչում: Ասաց, որ իր գիտական հոգվածներում և զեկուցումներում նա հաճախակի փոր-

ծել է հիմնավորել, որ հայերենի բոլոր բարբառներն անցողիկ են և ի վերջո դատապարտված են վերացման: Բայց երբեք չէր մտածել, որ այս գործընթացը կարող է այդպես արագանալ: Եթե լեզուները մահանում են այն ժամանակ, երբ ժողովուրդն է բնաջնջվում կամ ծուլվում այլ ժողովրդի հետ, ապա բարբառները վերացման մեկ այլ ճանապարհ էլ ունեն, այն է՝ իրենց մայրենի լեզվին միաձուլվում: Եվ ինչքան շատ են միասնականացնող հանգամանքները, հատկապես եթե բարբառը չունի իր գործածության առանձին միջավայրը, այնքան բարբառը վերացման ենթակա է: Այս հանգամանքը մասնագետներից պարզապես ստիպում է առավել արագ և արդյունավետ փորձել գտնել գրավոր ձևով փրկել Դարաբաղի բարբառը, բանահյուսությունը և ազգագրությունը: 14-20-րդ հատորները կընդգրկեն Դարաբաղի բարբառի վերաբերյալ ուսումնասիրությունները: Գործը կիսատ չթողնելու համար Ա. Սարգսյանն իր երախտագիտությունը հայտնեց «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամին: Նա տեղեկացրեց, որ այս նախագիծը իրականացնելուն նպաստել են ԱրՊՀ 100-ից ավելի աշխատակիցներ: Ասել է թե՛ հատորաշարը հարյուրավոր նախանձախնդիր մարդկանց աշխատանքի արդյունքն է:

Ա. Սարգսյանի վկայությամբ՝ այսօր Դարաբաղի բարբառն ամենից մեծ ուշադրության արժանացած բարբառն է ոչ միայն ՀՀ-ում, այլև Հայաստանից դուրս հայագիտական կենտրոններում: Աշխարհի որևէ ծայրում գրեթե չի կազմակերպվում հայերենագիտական որևէ գիտաժողով, որտեղ առնվազն 1-2 զեկուցում չլինի Դարաբաղի բարբառի վերաբերյալ: Հայ լեզվաբանության նահապետ, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՉԱԼ թղթակից-անդամ Լավրենտի Հովհաննիսյանն այսօր ստեղծում է հայ իրականության մեջ նմանը չունեցող մի հրաշալի աշխատանք՝



«Դարաբաղի բարբառի հնաբանությունները», որը շուտով պատրաստ կլինի և կընդգրկվի մատենաշարի հաջորդ հատորներում: Նա հավելեց, որ նախատեսված 20 հատորում մինչ այժմ եղած նյութերն են և համոզված է, որ հետագա տասնամյակներին, գուցե 100 տարի հետո լինելու են երիտասարդներ, որոնք շարունակելու են այդ գործը և նորանոր հատորներ են ավելացնելու:

Դարաբաղի բարբառն ամենից շատ ուսումնասիրված բարբառներից մեկը լինելով՝ տպագիր նյութերից բացի կան բազմաթիվ արխիվային նյութեր, նաև՝ ձեռագիր, որոնք հայտնաբերելու համար կատարվում են որոշակի աշխատանքներ:

Այս հատորաշարում ընդգրկված են Արցախի բոլոր գյուղերից հավաքած նյութեր, այդ թվում՝ Չայլուի, Մարաղայի, Մեհտիշենի, Հաղոթի, Շաղախի բարբառները: Սրանք ավելի կարևոր են, քանի որ բարբառները շատ հաճախ իրենց մեջ պարունակում են այնպիսի հնչյունաքերականական իրողություններ և հատկապես բառեր, որոնք ավելի հին են, քան գրաբարը և կարող են փայլուն նյութ ստեղծել հնդեվրոպական լեզուն, նախագրաբարյան շրջանը ուսումնասիրելու համար:

«Այսօր աշխարհում ստեղծվել է քաղաքական մի իրավիճակ, երբ յուրաքանչյուր պահի սլաքը կարող է թեքվել մեր օգտին, իսկ դրա համար յուրաքանչյուր պետք է կատարենք մեր աշխատանքը», - վերջում ասաց հատորաշարի խմբագիրը:

«Արցախի ժողովրդագիտությունը» վաճառքի ենթակա չէ, տպագրվել է 150 տպաքանակով: Այն բաժանվել է մասնագետներին, գրադարաններին, համալսարաններին, 30 օրինակ էլ նվիրվեց շնորհանդեսի մասնակիցներին:

Աղբյուրները բոլոր հնարավոր միջոցներով փորձում է խեղել իրականությունը: Մեր մտավորականների հակադարձը պիտի լինի նաև այսպիսի գրքերի տեսքով: Այսօր, ցավոք, մենք տեսակի պահպանման լուրջ խնդիր ունենք, և այս գիրքը դրան միտված քայլ է:

Հովհ. Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Դարախանյանի բնորոշմամբ՝ սա պայքարի դիրքային խրամատ է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՊՐԵՔ, ԵՐԵՒՆԵՔ...

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ի՞նչ երջանիկ է Հայաստանը, որ ծնել է այդպիսի իսկական հումանիստ: Ի՞նչ երջանիկ ժողովուրդ է, որ դաստիարակել է այդպիսի մեծ սիրտ: Եվ սիրտ, և՛ կամք, և՛ միտք:

Թող ամբողջ աշխարհն իմանա, մենք անսահմանորեն հզոր ենք և հարուստ՝ կուլտուրայով: Թող համաշխարհային պոեզիայի աստղերն իրենց հայացքը գցեն հայկական հանճարի ստեղծագործական ջրերի մեջ:

Պ. Տիգրան

Ամեն անգամ հանճարեղ Լոռեցուն առնչվելիս կամա-ակամա խորատուգվում ես նրա զարմանահարաշ աշխարհը, ուր միայն մանկան պարզությունն ու անկեղծությունն կա, սեր ու խիճկա, հոգու խաղաղություն: Նրա աշխարհում խոր ցավն անգամ կարողանում են «հեշտ մարտել»: Ինչ կախարդական ձգողականություն կա ամբարված նրա երկերում, որ այդպես կլանում է մեզ:

Թումանյանի ստեղծագործությունը լի է անսահման մարդասիրությամբ, մանկական միանություններով, հայրենի բնաշխարհին ծուլվելու բուռն ցանկությամբ, սիրով ու կարոտով, երկնային մանանայով: Այդ իմաստուն այրը գեղջկական մաքրությամբ ու պարզ փիլիսոփայությամբ աշխարհին է մատուցել մի ողջ ժողովրդի խիճկն ու ծիծաղը, կախարհիչ բնաշխարհը, այդ աշխարհում ապրող մարդու հոգեբանությունը, մեծ ցավն ու վիշտը: Նրա խորաթափանց հոգին կարողացել է ներխուժել իր ժողովրդի հոգեբանության բոլոր շերտերը, պեղել ու դրանց համամարդկային հնչեղությունն հաղորդել:

Յոգիս՝ տանը հաստատվել-Տիգրանըն է ողջ պատել. Տիգրանի տերն են ես, Ո՞վ է արդյոք նկատել: Թումանյանն անկրկնելի է իր տեսակի մեջ: Ամեն մարդ ունի իր Թումանյանը, թումանյանական իր ընկալումը, ու երբեք էլ ոչ մի միջոցառում մյուսի կրկնությունը չի դառնում, բանգի դրանք հեղինակի պես ինքնատիպ են:

Օրերս նման մի բացահայտում էր արել Արցախից բռնի տեղահանված մանկավարժ, ԱՀ ԿԳՄՍ նախկին դպրոցական տեսուչ Աննա Պետրոսյանը, որն այսօր դասավանդում է ՀՀ Արարատի մարզի Դուկասավանի միջնակարգ դպրոցում: Իր սաների ստացած գիտելիքները համալրելու, ավելի կենդանի ու առարկայական դարձնելու նպատակով Ա. Պետրոսյան մեծությամբ հետ նրանց ավելի մոտիկից ծանոթացնելու համար նա 4-րդ դասարանի իր 25 աշակերտներին բերել էր «Հրամոտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարան, որտեղ վերանորոգման պատճառով ժամանակավորապես տեղակայված է Հովհաննես Թումանյանի թանգարանը:

Երբ ոտք ես դնում կենտրոն, թվում է՝ մտել ես Հանճարեղ ու հնուտ Լոռեցու աշխարհ ու «խոսք ես խոսում» նրա հետ: Ամեն ինչ շնչում է Թումանյանով, անգամ՝ պատերն ու սյուները. նրա իմաստուն խորհրդածությունները՝ կյանքի ու մահվան մասին, անձնական իրերը, գրական ընկերների լուսանկարները, աշխատասենյակի, հյուրասենյակի կահավորանքը, «Վերնատան» մասին պատմությունը, Լոռու հրաշք բնության տեսարանները,

այսինքն՝ ամեն ինչ խոսում է ու տպավորի:

Աննա Պետրոսյանը աշակերտներին երկու խմբի բաժանեց, երկու խմբավարները՝ թանգարանի աշխատակիցներ Լեյլան ու Անահիտը, վերջին իրենց խմբի աշակերտներին ու շրջեցին թանգարանի սրահներով՝ երեխաներին ծանոթացնելով թումանյանական բացառիկ աշխարհին: Նրանք ամենայն մանրամասնությամբ ներկայացրին մեծ գրողի կյանքի ամեն մի դրվագը, կապերն ու հարաբերությունները գրչակից ընկերների հետ: Քանի որ ուսուցչուհին ամեն մանրուքով «զինել» էր իր աշակերտներին, խմբավարների խոսքին զուգահեռ՝ նրանք միջամտում էին ու ներկայանում իրենց փայլուն գիտելիքներով, որը, իհարկե, զովեստի էր արժանանում խմբավարների կողմից:

Երեխաները տեղեկացան, որ Թումանյանը սիրում էր բարձունքները. նրա բնակարանը պիտի լիներ ամենավերին հարկում՝ երկնքին մոտ, ուներ իր աշխատասենյակը, որտեղ՝ գրքերի շրջապատում, սիրելի ընկերների միջավայրում, շատ ժամանակ էր անցկացնում: Նրան ոսկի օղակ էին անվանում, քանի որ բոլորին իր շուրջը համախմբելու բացառիկ ուժ ու

րիկյան արտադրության կոշիկները, 3. ճապոնական ջեռակները, 4. «Հայուհու գլուխը» կտավը, 5. «Իյա Մուրոմեց» պահարանը (ի միջի այլոց, շատ հետաքրքիր է այս պատմությունը. ուզում էր գնել մի պահարան, որը 80 ռուբլի արժեր, և ինքը չուներ այդ

ջում: Տրված էր մեր ժողովրդական առած-ասացվածքների սկիզբը, պետք է երեխաները գտնեին շարունակությունը, կամ տրված էր վերջը, պետք է գտնեին սկիզբը: Սա էլ թերևս երեխաների խոսքի զարգացման, մեր հարուստ բառ ու բանին հաղորդակից

Հարցին, թե ինչպես է շարունակում ապրել արցախի մանկավարժ, մանկավարժական գիտությունների թեկնածու Աննա Պետրոսյանն այս ծանր ժամանակահատվածում, նա պատասխանեց, որ իր օրը լցնում է երեխաների հետ աշխատելով: Ուսուցչուհին բոլորից քաջ է գիտակցում, թե ինչ է հայրենիքը, նվիրվածությունը, մշակույթի ու արվեստի հարատևությունը: Աշխատում է մեծ հաճությամբ ու եռանդով, ինքնամոռաց: Նա հատուկ ընդգծում է լավագույն ավանդույթներով հարուստ Դուկասավանի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, հմուտ ու համերաշխ տնօրենության, ուշադիր ու հոգատար ծնողների մասին, որոնք կուռ միասնությամբ աշխատում են ուսուցիչների հետ, ու շատ հարցերում էլ իրենք են դառնում նախաձեռնող: Ընտրակալ է բոլորից՝ իրեն հոգատարությամբ ու ջերմությամբ շրջապատելու համար: Մինչև վերջ անկեղծանում է. «Շատ վաղ եմ արթնանում, անհամբերությամբ շտապում դպրոց՝ հաճելի դեմքերին հանդիպելու, համատեղ աշխատելու, երեխաների՝ բարությանը լեցուն հայացքները վայելելու համար: Ուրախ եմ, որ հենց այդ դպրոցում են աշխատում»:

Ոչինչ չխնայելով՝ արցախի ուսուցչուհին մեծ սիրով է իրականացնում իր առաքելությունը՝ կրտսեր դպրոցականների սիրտն ու հոգին լցնելով թումանյանական պարզությամբ ու անկեղծությամբ, լույսով ու ջերմությամբ: Այսպես Արցախը շարունակում է շնչել ու ապրել մայր հայրենիքի մարզերում:

Թումանյանի շունչը թևածում է ամենուր: Բարձր է մեծ գրողի հոգին հայրենի լեռների պես՝ իր արծվաթիչ խոսքերով ու երկնալաց ծախրանքներով: Նա հավերժ մնալու է այն մարմարակերտ բարձունքը, որին տենչալու են մեծ թե փոքր, խելոք թե իմաստուն: Վստահ կարելի է հաստատել, որ ներքոհիշյալ տողերը հենց իրեն են բնութագրում.

Երնե՛կ նրան, որ իր գործով Կապրի անվերջ, անդադար...

Այո՛, երնե՛կ նրան, որ բոլոր դարերի համար մնալու է որպես լուսապայծառ ու հավերժ լուսատու երկրային մի աստղ՝ լի ջերմությամբ ու արևային ցուլանքով:

Ինչպես հանճարեղ գրող Հրամոտ Մաթևոսյանն է ասել, իրոք որ մենք ապրում ենք Թումանյանով. «Թումանյանով՝ մենք կանք: Առանց Թումանյանի՝ մենք չկանք... Այդպես միայն զորավար-արքաներն են լինում... Իր կատարելությունը կատարյալ դառնալու կարիք չի գզում... Նա իր ժողովրդի կատարելության խորհրդանիշն է»:

Ուրեմն հավերժ Թումանյան կարդանք, որ Մարդ մնանք՝ անկեղծ ու շիտակ, հայրենի հողը պաշտող ու նվիրյալ, մարդամոտ ու մարդասեր, գիր ու մշակույթ պահպանող, հայրենիքի հոգսերով ապրող քաղաքացի:

Լինե՛ր հեռու մի անկյուն, Լինե՛ր մանկան արդար քուն, Երագի մեջ երջանիկ, Հաշտ ու խաղաղ մարդկություն: Թող մեր աշխարհին միշտ բարի լույսի զանգեր զարկեն:

Թող խաղաղության լույսը միշտ բացվի մեր աշխարհին:

Սուրյա ՂԱԶԱՐՅԱՆ



զուճարը: Շտապ վերադառնում է տուն, թարգմանում Իյա Մուրոմեցի մասին բիլինան, հոնորարով էլ գնում է պահարանը, որն անվանում է Իյա Մուրոմեց), 6. Քառյակների տուփն ու թախտը, 7. Արծաթյա նոթատետրը՝ Լոռեցիների հայրենակցական միության անդամների նվերը գրողի 50-ամյակի առթիվ, 8. Ցուլի արձանը, 9. 13 պահարաններում պահվող գրքերը, 10. Պատի դեղատուփն ու Թումանյանի սիրտը (սա ևս հետաքրքիր է իմանալ: Երբ Մոսկվայի հիվանդանոցում մահանում է Թումանյանը, նրա որդին՝ Արեգը, դիակտերոգրաֆի գաղտնի վերցնում է հոր սիրտը և գրում եղբորը. «Ես չուզեցի հայրիկի բարի սիրտը թափեն: Թաթուն վերցրի»):

Ավելի քան 20 տարի այդ սիրտը պահում էին տանը: Մի անգամ Իսահակյանը հյուր է գալիս Թումանյանի ընտանիքին, գրույցի են բռնվում, և ուշ ժամի պատճառով որոշում է մնալ: Ողջ գիշեր Իսահակյանը չի կարողանում քնել: Երբ որոշեց իմանում է, որ հոր սիրտը սենյակի դեղատուփում է պահվում, հասկանում է իր անբնական պատճառը և խորհուրդ է տալիս այլևս տանը չպահել: Հետո այն տեղափոխվում է Երևանի բժշկական ինստիտուտ: Բանաստեղծի սիրտը հուղարկավորվում է միայն 1994 թվականին Դսեղի հայրական տան բակում):

4-րդ դասարանի երեխաներն այս ամենի մասին գիտեին իրենց հնուտ ուսուցչուհու շնորհիվ, որը, իրոք, հայրենամեղ գործ է կատարում: Գիտեն նաև, որ Կոմիտասի հանրահռչակ «Կաթավիկ» երգի խոսքերի հեղինակը Հովհ. Թումանյանն է, ու շատ գեղեցիկ կատարեցին ոչ միայն այդ, այլև «Խնոցի», «Կոտ ու կես», «Ա՛խ, ի՞նչ լավ են սարի վրա», «Աղվեսի երգը», «Ամպի տակից ջուր է գալիս» երգերը՝ հաճելիորեն տպավորելով մշակութային կենտրոնի աշխատակիցներին, որոնք այնքան բարեհամբույր ու հարգալից վերաբերմունք ցուցաբերեցին բոլորի հանդեպ:

Երեխաների օրն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով նրանք հոգացել էին ուրախ ժամանցի մասին՝ խաղատախտակներով խաղ կազմակերպելով միջոցառման վեր-

դարձնելու մի կարևոր դրսևորում էր: Ահա մի քանի օրինակ. «Կատվի խաղ, մկան մահ», «Առել է կուտը, մտել է մուրը», «Ով ալարի, ոչ դալարի», «Քամու բերածը քամին էլ կտանի», «Մի ունեցիր 100 դահեկան, այլ ունեցիր 100 բարեկան», «Պտղատու ծառը գլուխը կախ կլինի», «Ինքը չկա թիզուկես, արարմունքը՝ գազուկես»...

Վերջում երեխաների ելույթը հուզեց ներկաներին: Ուսուցչուհին իր հետ բերել էր անհրաժեշտ բոլոր դեկորացիաները՝ մեծ գրողի հեթիաթներն ավելի կենդանի ներկայացնելու համար: Աշակերտները կերտեցին Քաջ Նազարի, Սուտիկի որսկանների, Չախչախ թագավորի, Անիելք մարդու, Սուտասանի, Կացին ախպոր, Խելոքն ու հիմարի, Տերն ու ծառայի և այլոց կերպարները: Ուղղակի



հրաշալի էր ամեն ինչ: Գոհ մնացին և՛ երեխաները, և՛ թանգարանի աշխատակիցները:

Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին, երեխաներին և նրանց ծնողներին՝ մի սերունդ ևս թումանյանական շնչով դաստիարակելու համար: Վերջում էլ՝ համատեղ լուսանկար՝ քաղցր հիշողությունների համար:



ներ: Գրական կնքահայրը Ղազարոս Աղայանն էր. նա էր խրախուսում, ոգևորում Թումանյանին: Չմայած տարիքային զգալի տարբերությամբ (Աղայանը շուրջ 30 տարով մեծ էր Թումանյանից)՝ նրանք շատ մտերիմ ընկերներ էին:

Խմբավարները, երբ ներկայացնում էին հյուրընկալությամբ բոլորին հայտնի Թումանյանի ճաշասենյակի, հյուրասենյակի, աշխատասենյակի կահավորանքը, չմոռացան ընդգծել, որ գրողը շատ բարձրաճաշակ անձնավորություն էր: Իսկ երբ խոսք գնաց 13 պահարաններում պահվող գրքերի մասին, երեխաները, մեկը մյուսին գերազանցելով, պատմում էին, որ Թումանյանը 10 հազար կտոր գիրք է ունեցել, որից 2 հազարը վերցրել ու չէին վերադարձրել: Եվ որպեսզի այլևս չտեսնեն ու գիրք չխնդրեն իրենից, նա 13 պահարանների ապակիները ծածկել էր նկարներով: Գրքերը չէր սիրում տալ միայն դառը փորձի պատճառով:

Հետո արդեն երեխաներն իրենց ելույթում պիտի թվարկեին Թումանյանի արժեքավոր 10 իրերը, որոնց շարքում էր 13 պահարանում պահվող մեծ գրադարանը: Այդ 10 իրերն էին. 1. 4նոց՝ Օլգայի երգարանը, 2. Ամե-



ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՂԳՈԹԱ

ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱԿԱՐԻՆ՝ ԴԺՈՒՔԻ ԳՈՒՅՆԵՐՈՎ Պատում 4

Բացվել էր կյանքի ճանապարհը, բացվել էր՝ ոչ թե ուրախություն պարզակալ, այլ միայն մեր ցավն ու կսկիծը բազմապատկելու համար:

Հագարամյակների պատմություն ունեցող բնիկ իմ ժողովուրդը թողնում էր հողը հայրենական ու դառնում վտարանդի: Ո՞վ էր մեղավոր...

Այդ պահին այս հարցը կոնկրետ պատասխան չուներ, միայն համոզված էինք, որ Արցախին մեծակ թողնեցին, մայր հայրենիքը ոչինչ չարեց՝ կանխելու այդ արհավիրքը, աշխարհի հայությունը արժանավույնս ոտքի չկանգնեց ու հանդուրժեց ազգակործան դավաճաններին: Միայնակ ու անտեր Արցախը ի՞նչ կարող էր անել, եթե անգամ տեղովը մեկ կրակ դառնար: Յոթվաանի վիշապը արթնացել ու հոշոտում էր բազմաչարչար իմ ժողովրդին, ու աշխարհը լռում էր, լռում էր հայության անգործությունից: Իսկ թշնամին իր նավթադոլարներով փակում էր աշխարհի բերանը ու արդարացում էր բարբարոսությունները:

Գաղթում էր արցախահայությունը՝ մահվան սարսափն աչքերում, անհուն ցավը իր հոգում, ուշքը միշտ իր օջախին, հարազատ լեռների ու ձորերին, իր սուրբ գերեզմաններին, հազարամյակների պատմությանը ու չքնաղ բնաշխարհին:

Խռոված խուլ ու համր աշխարհից՝ գաղթում էր արցախահայությունը, փախչում էր ինքն իրենից, իր ինքնությունից, ու կարող էր խեղդվել իր նրան:

Կյանքի ճանապարհը քաշում-տանում, կուլ էր տալիս բոլորին ոչ թե 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախը լքած մարդկանց հոգեբանությանը, որոնք հավատում էին, որ վերադարձն անխուսափելի էր լինելու, այլ լիովին հուսահատ ու հուսախաբ, վիստ մարդկանց անվերջանալի քարավաններով, որոնք վերադարձի ու կյանքը շարունակելու տեսլական այլևս չուներին:

Գաղթականների մեքենաների հոսքն անվերջ ձգվում, ձգվում էր... Մի ծայրը Հայաստանում էր, մյուսը՝ Ստեփանակերտի նորակառույց Ար. Աստվածամոր Հովանու մայր տաճարի մոտ, քաղաքի հրապարակում, «Պոստ ԳԱԻ»-ի տակ:

Մետաքազորների փողոցը գիշեր-ցերեկ դատարկվում էր (մենք այդտեղ էինք ապրում), առավոտները վեր էինք կենում, տեսնում՝ հարևանները չկան: Գիշերները բեռնվում էին մեքենաները, մինչև լույսը բացվելը՝ անհետանում: Ինչքան պակասում էին բնակիչները, այնքան խուճապն ավելանում էր, սարսափը՝ մեծանում: Հարևաններից մեկի որդին, որ այդ պատերազմի ժամանակ շրջափակման մեջ էր հայտնվել, օրերով կապի չէր դուրս գալիս ծնողների հետ: Նրա մայրը ամբողջ օրը խենթի պես փողոցի մի ծայրից մյուսն էր գնում՝ որդու մասին մի տեղեկություն իմանալու, բայց առաջին օրերին չէր հաջողվում: Մի քանի օր անց լուր է ստանում որդուց, որ ողջ է առողջ է ու շուտով տուն կվերադառնա: Ուրախությունից մայրը թռչկոտում էր ու սպասում որդուն, իսկ այդ ընթացքում փողոցը ժամ առ ժամ դատարկվում էր: Հենց որ մթնում էր, սկսում էինք հաշվել այն լուսանկարները, որ տեղ որ լույս էր վառվում: Ամեն անգամ հաշվելիս այդ թիվը խիստ պակասում էր...

Քաղաքում այլևս ստեփանակերտցիների դժվար էր հանդիպել. շրջաններից եկածներն օրերով թափառում էին փողոցներում, տմից տուն շրջում՝ ուտելիք ու վառելիք հայթայթելու համար: Սնունդ բացարձակապես չկար, մարդիկ մի կերպ էին գոյատևում, իսկ վառելիքի հարցը մնում էր հրատապ:


Մի օր էլ՝ ժամը 10-11-ը, կրակահերթեր ու կանացի ուժեղ գոռոցներ լսեցինք: Դուրս եկանք պատշգամբ, տեսանք՝ այն նույն կինն է, որ օրերով որդուն էր սպասում: Փողոցով մեկ գոռում էր. «Այ ժողովուրդ, դուրս եկեք, թուրքերը եկել-հասել են գերեզմանոց, ու՞ր են տղամարդիկ...»

Տղամարդ որտեղի՞ց, կամ եթե լինեին էլ, ինչո՞վ դուրս գային թշնամու դեմ: Ձենք չկար, բանակը գեները հանձնել էր: Անընդհատ իրար էին հաջորդում խուճապային իրավիճակները: Իսկ

մենք դեռ սպասում էինք, որ ճանապարհը մի քիչ թեթևանա: Տան ամեն մի իր ավելորդ բեռ էր դառնում մեզ համար, պարզապես ուզում էինք փախչել այդ իրականությունից ու փրկվել. այս միտքն էր միայն պատվում մեր ուղեղում, մանավանդ որ մեր հարազատներն էլ անընդհատ զանգում ու անհանգստանում էին մեզ համար: Կարծես մահվան իրեշտակը կրնկակոխ հետապնդում էր մեզ:

Կյանքի ճանապարհը շարունակում էր անհագորեն կլանել արցախահայությանը՝ գրկելով իր բնօրրանից: Հայրենի հողը ասես սզում էր իր զավակների բացակայությունից ու մոռնում անհուն ցավից: Ախր ո՞նց թողնես այս չքնաղ երկիրը, որ ի բնե օրինված էր Աստծու կողմից:

Ի՞նչ էինք տանելու մեզ հետ այս երկրից, որ օտարության մեջ կարող էր խեղդվել մեզ: Ամեն ինչ կորցրել էր իմաստը: Նայում էինք սենյակի ծա-



ղիկներին, որ բողբոջել ու սպասում էին կյանքի զարթոնքին և մտորում, որ այդ գեղեցկությունը փրկել է պետք. դրանք մեզ հետ կտանենք (հիարկե, ոչ բոլորը), որովհետև թաղարի հարազատ հողը ուժ կտար նրանց՝ ապրելու համար, քանզի դա Արցախի հողն էր: Այս միտքն էր շուրջ անզգայությունից բթացած մեր ուղեղները: Հայրենի հողից մի բուն էինք տանելու օտարություն:

Հետո՝ օրեր անց, Արցախի հանրային հեռուստատեսության հաղորդավար ու լրագրող Ծովհանուր Բարխուդարյանը ՀՀ 5-րդ ալիքին տված հարցազրույցի ժամանակ հուզմունքով խոսեց՝ քաղաքի փրկությանը մասնակցելու մասին: «Մենք դարձանք մեր հողերը փոքրիկ տոպրակներում տանող ժողովուրդ... Ես չգիտեմ՝ աշխարհում կա՞ էլի մի ազգ, որ սեփական հողը սուվենիր է դարձնում...»: «Ավ մը մոխիր հայրենի ավերակներում...»: հիշեցի մեծ բանաստեղծի այս խոսքերը, ու սիրտս ցավից կծկվեց: Ավ մը մոխիր...

Հանգստարանի թաղում դեռ շարունակում էինք «վայելել» մահվան ներկայությունը, սակայն չէինք լքում քաղաքը, սպասում էինք...

Մեր առաջին հարկի հարևաններն էլ մեկնեցին՝ տան դուռը թողնելով բաց, ողջ ամառը ձմռան համար ամբարած պահածներն ու նուրբ բաները թողած: Լավ էր, որ նրանց տանը մի քիչ այլուր, կարտոֆիլ կար: Հաց էինք թխում, գոյություն պահում: Իսկ փրկված հարազատների զանգերը չէին դադարում, շտապ հեռանալու կոչ էին անում, որովհետև հնարավոր էին համարում ճանապարհի փակվելը:

Ի վերջո, սարսեցնող մի զանգ ենք ստանում, որ թշնամին բնակավայրերն է մտնում ու մարդկանց մորթում... Այլևս համբերելու հնար չկար: Մեքենան ենք բարձում որոշ իրեր՝ իհարկե, չնուռանալով ծաղիկները, աղավնիների վանդակը (որդիս ընտրել էր իր աղավնիներից ընդամենը մեկ տասնյակը), որոշ լուսանկարներ անում բակից ու պատշգամբից՝ որպես հիշատակ, գիշերվա չարքերի պես լքում բնակարանը, հարազատներով հավաքվում ու կեցիքներն անց բռնում «կյանքի ճանապարհը», ավելի շուտ՝ դժոխքի ճանապարհը՝ անորոշ հեռուն՝ լի բազում փորձություններով ու նյարդեր բորբոքող տհաճ անակնկալներով: Ձարմանալիորեն ազատ էր ճանապարհը քաղաքի տարածքով. խցանումներ չկային: Անարգել հասնում ենք Մազի կամրջին. աչ կողմում մեքենաների շարաս-

յուն էր՝ մի շարքով, որ կանգնած էր վառելիքի բացակայության պատճառով: Հասնում ու արագ անցնում ենք կամուրջը: Առջևում՝ վերևում, Շուշին էր՝ թուրքերով ու սարսափով լի: Երկու-երեք կիլոմետր առաջ ենք շարժվում ու տեղ զբաղեցնում խցանված մեքենաների շարքում: Այդ պահին միայն կարևոր էր հայտնվել բոլորի մոտ (ընկերովի մահը հարսանիք է, զուր չէ ասված): Մի անուն ենք քարավանին, որ կանգ էր առել ու իմանա որքան ժամանակով: Խաղաղապահներն ու թուրքերն էին տնօրինում մեր ճակատագիրը: Մեքենաների շարժը նման էր կրիայի քայլերի. մի քանի մետր առաջ էինք գնում ու կանգնում: Շուշիի ոլորաններում արդեն փչացած ու կանգնած մեքենաներ էին հայտնվում: Ո՞ր էին տերերը՝ չէինք հասկանում. ընդունակ չէինք:

Մութն ազահաբար կլանում էր մեզ: Ժամերով կանգնած ենք մնում, չէինք համարձակվում մեքենայից դուրս գալ. այն զգացողությունն ունեինք, որ ոտից կրնկակոխ հետևում է մեզ և ուր որ է թիկունքից հարվածելու է... Մարդիկ աչքերը բաց անցնում էին 21-րդ դարում իրականացվող տեղահանման ու հայրենագրկման քավարանով: Եվրոպայի աչքերը մշուշով են պատված. ոչինչ չի տեսնում:

Արշալույսը աստիճանաբար բացում էր ճարտարած աչքերը, ու մենք քայլ առ քայլ հեռանում էինք թշնամու որջից՝ Շուշիից՝ փոքր-ինչ խաղաղվելով: Գաղթականների աչ ու ձախ կողմերում մեքենաներ էին կանգնած. մի տեղ մեծահասակ մարդ էր վատացել, մի տեղ երեխա էր լալիս ու իրենց տունն էր ուզում, մի ուրիշ տեղ մարդիկ կրակ էին վառել ու հաց էին թխում ընտանիքի անդամների համար, մեկն էլ ինքնաբեռն էր վառել, որ թեյ խմեն, տաքանան: Գաղթականների երկու եզրերին լրիվ հակասահարակալ վիճակ էր. թափված անձեռոցիկ ու պլաստիկ տոպրակներ, շշեր, սննդի մնացորդներ... Մեր հրաշագեղ բնությունը արբանոցի էր վերածվել: Նայում էս մարդկանց՝ ոչինչ չարտահայտող դեմքին ու հասկանում, որ այդ պահին նրանց միմիայն մի բան է հուզում՝ կենդանի փրկվել այս գեհեմից:

Մեկ ժամվա տևողություն ունեցող այդ ճանապարհը երկարում, երկարում էր ու վերջ չուներ: Տառապալից ժամերն ու օրերը թվում էին անվերջանալի: Լսում էինք մարդկանց մահվան, մանուկների լույս աշխարհ գալու մասին. շտապօգնության մեքենաներն անընդհատ վերուվար էին անում՝ իրենց ազդանշանային ծայրով տակնուվրա անելով մեր հոգիները: Այդ խցանումների մեջ մեքենաներ էին իրար հարվածում ու խանգարում ընթացքը... Մենք անզգայացել էինք ու ոչինչ չէինք ընկալում:

Ո՞վ դարձրեց իմ դրախտ երկիրը ահավոր գեհեմ: Ո՞վ էր պատասխան տալու այս չարագործությունների համար: Ե՞րբ է ոտքի կանգնելու այն միասնական սերունդը՝ անցյալ դարի 80-ականների գաղափարներով, որ արմատախիլ անի այս չարիքը մեր երկրից, որ մի նոր ուժով բորբոքի հայրենական սերը ու խաղաղ օրեր պարզակի մեր ժողովրդին: Այդ ե՞րբ է գալու: Իսկ այդ ընթացքում «կյանքի ճանապարհով» շարունակվում էին մեր անլուր տառապանքները: Իսկական դժոխքը դեռ առջևում էր...


Հակարի բառը լսելիս սարսռում էր մարմինս. մենք առաջ էինք գնում, իսկ նա՝ հետ. գուցե նրա համար, որ ավելի երկար տևեին մեր տանջանքները: Ե՞րբ ենք արդյոք հատելու այդ դժոխքը...

(շարունակելի)

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՊԻՍԻՆ ԿԱՐՈՒԺԱՆ-140

Պիսի ապրի հայը, ցորչափ փարած է նա իր գրչին՝ որ կարտահայտե սրբագործող միտքը, իր բահին՝ որ աշխատությունը կը հատկանշի, և իր գեներին, որ գործիքն է գորավորության:



ՁՈՆ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր. - Քեզի ընծա՛, իմ հայրենիք - Սոսյաց անտառեն էի գայն կըտրեր... - Քեզի ընծա՛, հին հայրենիք - Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր. Ընդ եղեգան փող լու՛յս ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի կարոտ. - Ձեզի ընծա՛, հայ պանդուխտներ - Ան տարաշխարհիկ բույսի մ՛եր ծղղոտ... - Ձեզի ընծա՛, հեզ պանդուխտներ - Եղեգնյա գրչով երգեցի հարսեր. Ընդ եղեգան փող ո՞ղբ ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի արյուն. - Ձեզի ընծա՛, սուրի գոհեր - Ան ծած էր մոխիր մեջ իբրև կընյուն... - Ձեզի ընծա՛, կրակի գոհեր - Եղեգնյա գրչով երգեցի վերքեր. Ընդ եղեգան փող սիրտս ելաներ:

Եղեգնյա գրչով որք տունս երգեցի. - Քեզի ընծա՛, հայր ալեհեր - Ցամբած աղբյուրեն մեր գայն հոտեցի... - Քեզի ընծա՛, մայր կարեվեր - Եղեգնյա գրչով օջախս երգեցի. Ընդ եղեգան փող ծուխ ելաներ:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի. - Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ - Գրիչս եղավ անթոց սըրտերու հնոցի... - Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ - Եղեգնյա գրչով վըրեծ երգեցի. Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

ԱՆՁԵՂՎԱՆ ԿՐԱԿ

ԱՐՑԱՆ ԿԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԿՈՒՅՄ Է ՈՒԺ ՏԱԼԻՍ



Մինչև բռնի տեղահանվելը կանանց միանայակին ընդառաջ «Լուսարար»-ի էջերում ներկայացվում էին արցախցի կանայք ու աղջիկներ՝ իրենց ձեռքբերումներով, օգտակար խորհուրդներով, կենսակերպի օրինակելիությամբ եւ Արցախում ապրելու ու արարելու ամուր դիրքորոշմամբ:

2023թ. չարաբաստիկ դեպքերից հետո հայրենիք, տուն ու տեղ, աշխատանք եւ ամենաձանձրը՝ հարս-գատ կորցրած արցախցի կանանց բաժին ընկավ նաեւ փախստականի դաժան ծակատարի բեռը, որն իրենց նուրբ ուսերին ստիպված են կրել պատերազմների քոխ ու բռնակ թրծված, միշտ իրենց մեջ նոր ուժ գտնող ու չկորսվող արցախցի կանայք:

Հավատարիմ մնալով ավանդույթին՝ «Լուսարար»-ը զրուցեց Արցախից բռնի տեղահանված կին-ուսուցչի հետ, որի հոգու լույսը, սերունդ կրթելու ու դաստիարակելու պատրաստակամությունը, ընտանիքին նեցուկ կանգնելու պարտավորությունը վեր են

հոգեկան ծանր ապրումներից:

Գայանե ԱՎԱԳԻՍՅԱՆ: Ծնվել է 1970թ. դեկտեմբերի 10-ին Ստեփանակերտում: 1978թ. ընդունվել է Ստեփանակերտի հ.2 դպրոցը, ավարտել այն 1988-ին: Արցախյան շարժման համապատկերին Գայանեն որոշում է, որ բարձրագույն կրթություն ստանալը լավագույնն է, ինչ կարող է անել հայրենիքից օգուտ տալու համար: Ընդունվում է Երեւանի պոլիտեխնիկ ինստիտուտ:

1994թ. ամուսնանում է Գուրգեն Արզումանյանի հետ, տեղափոխվում Արցախի Ասկերանի շրջանի Ռեյ գյուղ, իսկ ուսումը շարունակում Ստեփանակերտում՝ երեկոյան ուսուցման անցնելով ու ստանում ինժեների մասնագիտություն: Սակայն իր մասնագիտությանը համապատասխան աշխատանք չգտնելով՝ Գայանեն որոշում է այլ ոլորտում հմտանալ: 1994 թ. ընդունվում է աշխատանքի Ռեյի դպրոցում՝ որպես դասվար: Հոգուն հարազատ գտնելով մանկավարժի աշխատանքը եւ սերունդ պատշաճ կրթելու ժամանակի պահանջը՝ Գայանե Ավագիմյանը դպրոցում աշխատելուն զուգահեռ ավարտում է ԱրՊՀ տարրական կրթության եւ մեթոդիկայի բաժինը: 2000թ. զբաղեցնում է Ռեյի տարրական դպրոցի վարիչի պաշտոնը: Հետագայում աշխատում է Ռեյ-Ծաղկաշատի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: 30 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ ունեցող ուսուցչուհին նվիրված էր իր աշխատանքին, իր աշակերտներին եւ շրջափակման ծանր պայմաններում անգամ չէր մտածել, որ երբեւէ պետք է հեռանա հարազատ դպրոցից, աշակերտներից, գյուղից...

Բռնատեղահանվելուց հետո Գայանե Ավագիմյանն ընտանիքի հետ բնակություն հաստատեց Գյումրի քաղաքում: Նրան հաջողվեց վերագտնել իրեն Գյումրու հ.9 դպրոցում՝ ուսուցչի իր երկարամյա աշխատանքը շարունակելով դասվար աշխատելով:

Գայանեն չորս որդիների մայր է, որոնցից յուրաքանչյուրը պատվով անցել է զինվորական ուղին, հրաշքով ազատվել ու փրկվել թշնամու ճիւղերից:

**- Տիկին Գայանե, հավանաբար Ձեր ամուսնու հետ համատեղ դաստիարակությունն է որդի ծնողների համար զինվորական մասնագիտությունը:**

- Մենք՝ հայրենիքի ճակատագրով մտահոգված ծնողներ, մեր զավակների մեջ մանկուց սերմանել ենք հայրենիքի հանդեպ մեծ սեր ու պատասխանատվության զգացում, բայց նրանք էլ իրենց հերթին սիրել ու միշտ հետաքրքրվել են ռազմական արվեստով, զինվորական մասնագիտությամբ: Ավագ որդուս՝ Արթուրին դեռեւս դպրոցական տարիներին, երբ հարցնում էի, թե ի՞նչ է ուզում դառնալ, պատասխանում էր. «Есть такая профессия-Родину защищать»: Այդ էր պատճառը, որ Արթուրն ավարտեց Ստեփանակերտի Քրիստափոր Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանը, որից հետո մեկնեց ՌԴ՝ սովորելու Սանկտ-Պետերբուրգի Միխայլովի զինվորական հրետանային ակադեմիայում, որն ավարտելուց հետո էլ՝ 2019 թվականին վերադարձավ հայրենիք եւ անմիջապես ծառայության մտավ ԱՀ ՊԲ-ի զորամասերից մեկում որպես պայմանագրային զինծառայող, հրետանավոր՝ լեյտենանտի կոչումով: Մյուս որդիներս նույնպես ընտրել են հայրենյաց պաշտպանի մասնագիտությունը: Մենք միշտ խրախուսել ենք, որ մեր որդիները լինեն ծառայությանը նվիրված ու Արցախում ապրելու հաստատակամությամբ: Սակայն երբեք չենք պատկերացրել, որ ստիպված կլինենք հեռանալ: Նույնիսկ 2020թ. պատերազմից հետո էլ, չնայած Արցախի վտանգված ու անորոշ ապագային, այնուամենայնիվ ապրել ենք Արցախում, երկրորդ տուն ենք կառուցել, ավագ որդուս ամուսնացրել, մյուս որդուս նշանադրել:

**- Ինչպե՞ս հաղթահարեցիք շրջափակումը:**  
- Շրջափակման ժամանակ շրջաններում թերեւս համեմատաբար հեշտ էր կենցաղային կարիքները հոգալը: Սննդի պակասությունը

սուղ չէր, անասնապահությամբ էինք զբաղվում, քիչ թե շատ հասցնում էինք: Եթե հնարավոր էր լինում, փոխանակում էինք եղածը որեւէ անհրաժեշտ ապրանքի հետ: Վառելիքի պակասն էր մեղում, որդիներս ուղարկվել էին գնում-գալիս ծառայության վայր, իսկ Ստեփանակերտում բնակվող որդուս ընտանիքին հաճախ չէինք կարողանում այցի գնալ, քանի որ տրանսպորտը բացակայում էր: Բայց դպրոցական կյանքը գյուղում բնականոն էր, աշակերտները հաճախում էին պարտաճանաչ, մենք էլ մեր աշխատանքն էինք կատարում՝ մտածելով, որ սրանից վատ չի լինելու, ռուս խաղաղապահները տարածաշրջանում թույլ չեն տալու ռազմական բախումներ: Իսկ միզուցե ինքներս մեզ խաբում էինք՝ չցանկանալով դաժան ու անարդար իրականությունն ընդունել:

**- Կրկին պատերազմ:**

- 2023թ. սեպտեմբերի 19-ին հարգելի պատճառով աշխատանքի չէի գնացել: Սեպտեմբերի 13-ին եղբայրս հանկարծամահ էր եղել վաղաժամ, հուղարկավորվել էր Ստեփանակերտում: Հայրական տունն Ստեփանակերտի Ալեք Մանուկյան փողոցի շենքերից մեկում է, որտեղ սեպտեմբերի 19-ին պետք է մեկնեի եղբորս մահվան յոթ օրը (յոթը): Նախօրեին պայմանավորվել էինք ավագ որդուս հետ, որ միասին պետք է գնանք, բայց առավոտյան նա հայտնեց, որ չի կարող հետս գալ. կանչել են... Ապա հաջորդեց մյուս զինվորական տղաներիս նույն լուրը՝ բոլորը պետք է իրենց տեղերում լինեն, նույնիսկ նրանց հետեւից եկան զինվորական մեքենաներով: Տագնապներին սովոր էինք, բայց այս անգամ ամեն ինչ ավելի լուրջ էր: Արդեն գերեզմանից գնում էի դեպի Մանուկյան փողոց, երբ լսվեց պատերազմի բոթը ազդարարող մահաբեր ձայնը: Ստեփանակերտի փողոցներով մարդիկ խուճապահար վազում էին, ես էլ արագացրի քայլերս: Ահա մտնեցա շքամուտքին

եւ ականատես եղա մահազարհուր պատերազմի առաջին գոհին՝ ինը տարեկան երեխային, որի սիրտը չէր դիմացել վախին: Բժիշկներն արեցին ամեն ինչ, բայց չստացվեց փրկել փոքրիկի կյանքը: Վախենում էի տղաներիս գանգել, հագիվ էի դիմանում՝ չորս կողմից սարսափելի լուրեր լսելով: Հարսս թռռնիկիս հետ պատասպարվել էր մոտակա ապաստարանում, իսկ հարսնացուս հանրակացարանում էր: Գնացի գտա նրանց, տեսա, բայց որդիներիցս տեղեկություն չկար: Ահասարսուռ ժամեր սպանեցինք, պատերազմի ծայները լռեցին, գրեթե բոլոր թաղամասերից լսելի դարձան լացն ու սուգը: Գժվել կարելի էր... Ավագ որդիներս ողջ էին, լուր տվեցին, որ կրտսեր տղաներս՝ Արմանս ու Արտյոմս, դարձանակալած թշնամու շրջապատման մեջ են հայտնվել Դրսբունում ու Հաթերքում:

Սպասումի դաժան ապրումների մեջ էի, իսկ հարազատ գյուղուս դատարկվում էր: Մարդկանց մի մասն արդեն դուրս էր եկել Արցախից, մի մասը ճանապարհին խցանումների մեջ էր: Ինձ ասում էին՝ հավաքվիր, որ դուրս գաս, բայց ես չէի կարողանում մտածել ոչ մի բանի մասին, բացի իմ տղաների տուն գալու: Աչքիս ոչ մի բան չէր երեւում, ոչ տունս, ոչ ունեցվածքս, ոչ տարիներով մեր ստեղծած տնտեսությունը:

Օրեր անցան: Գյուղն արդեն հայաթափվել էր, ուր որ է՝ թշնամին վայրենաբար կներկախուժեց նաեւ մեր տները, բայց ես սպասում էի որդիներիս վերադարձին: Հետագայում, երբ արդեն հնարավորություն կար գրուցելու շրջափակման մեջ հայտնված տղաների ապրումների մասին, որդիս ասաց, որ հիմա է հասկանում ռուսական ասացվածքը, թե՛ «Ожидание смерти хуже самой смерти»: Մոր համար չկա իր զավակների կյանքից առավել կարեւոր բան: Փառք Աստծո, որդիներս ողջ դուրս եկան շրջափակումից ու հասան տուն՝ թեւս հյուծված, վիրավոր, հոգեկան ծանր ապրումների մեջ: Թվում էր, թե մղձավակները ավարտվել է:

**- Բայց առջեւում բեմզայակայանի չարաբաստիկ պայթյունն էր ու բռնի տեղահանվելու հոգեմաշ ճանապարհը:**

- Երբ հայտնեցին, որ Հայկազուլի բեմզայակայանից բեմզահն ստանալու հնարավորություն կա, չորս որդիներս էլ պատրաստվեցին գնալ բեմզահն ստանալու, ասում էին, որ մեծ հերթ է, պետք է արագացնել: Չօրհուսե ինչու, ես նրանց ուշացնում էի, մերթ ճաշ էի տալիս, մերթ բեմզահնի համար ամաններ էի փնտրում: Որդիս նույնիսկ բարկացկոտ տոնով ասաց, որ արագացնել է պետք: Մինչդեռ իմ ուշացնելը փրկեց նրանց կյանքը. մահազուլ պայթյունից հինգ րոպե ուշացան զավակներս... Վերադարձան ու պատմեցին, թե ինչ սարսափազդու տեսարան էր Հայկազուլում, թե առանց այն էլ տանջված մեր հայրենակիցների գլխին ինչ մի նոր աղետ թափվեց:

Բեմզահն այդպես էլ չկար, ստիպված էինք ամեն ինչ թողնել, թե՛ մեքենաները, թե՛ մեր մյուս ունեցվածքը: Գաղթի ճանապարհին տեսնում էի բեմզաված ավտոմեքենաները. մարդիկ իրենց հետ հանում էին՝ ինչ կարող էին, իսկ իմ մտքում միայն այն էր, որ Աստված փրկել է իմ որդիներին, որպեսզի շարունակենք ապրել, իմ հարսությունը իմ զավակներն են, ուրեմն պետք է հավաքել ուժերը եւ մեր ճակատագրին բնորոշ ըմբոստությամբ փյունիկի պես վեր հանել մոխիրներից:

Մեր գրկին էր մեկ տարեկան առաջնեկ թռռնիկս, որը նույնպես իր վրա զգաց Արցախից հեռանալու դառնությունը: Դժվար էր գաղթի ճանապարհը՝ խցանումներով, դժբախտ պատահարներով լեցուն: Երկու օր ճանապարհին հալումաշ լինելով՝ հասանք Գորիս, որտեղից պետք է մեզ ուղղորդեին որեւէ մի տեղ, բայց այն ասացին, որ արդեն

տեղ չկա, բոլոր տեղերը զբաղված են: Մնում էինք մեքենաների մեջ, մինչև որ կացարան կգտնվեր: Միակ տարբերակը սահմանափակ Որոտան գյուղի հյուրատունն էր, որտեղ ստիպված մնացինք:

Ծանր էր այդքանը տեսած ու ապրած մարդկանցս համար ամեն անգամ գյուղ մտնելիս ու դուրս գալիս կրկին բախվել թշնամու հեմակետին, որի անմիջապես կողքով պետք է անցնեինք: Ավելի ու ավելի էինք նեղսրտում, բայց մեզ համագտանալ էր պետք: Հետո որոշեցինք տեղափոխվել Գյումրի, որտեղ բնակարաններ վարձեցինք ու հաստատվեցինք:

**- Ի՞նչ դժվարությունների եք բախվում Գյումրիում:**

- Երկու որդիներս բարձրագույն կրթություն էին ստանում Արցախում, այստեղ շարունակել չցանկացան, քանի որ առաջնային հարցերի լուծման համար նախ պետք է աշխատել: Ամենամեծ խնդիրը աշխատանք գտնելն է, եւ մեղադրանքներ լսելը, թե՛ չենք դիմադրել, Արցախը թողել ենք թշնամուն: Այո, արցախցին կոտորված է, բայց երբեք՝ չնվաստացած: Արցախցուն հարիր պնդաճակատությամբ պետք է ապրենք հայի հողում, երբեք չմտածենք ուրիշ երկիր տեղափոխվելու մասին, ուշքի գանք ու վերադարձի տեսլականը կերտենք: Վերադառնալու հույսն է ինձ ուժ տալիս դիմանալու համար: Ո՞վ է ասել, որ հայրենիքը մեկ անգամ են ազատագրում:

**- Աշխատանքը դպրոցում:**

- Անցած տարվա հոկտեմբերի վերջին, երբ արդեն տեղափոխվել էինք Գյումրի, սկսեցի հետաքրքրվել, թե որտեղ կարող եմ աշխատել: Իմացա, որ Գյումրու հ.9 հիմնական դպրոցում ուսուցչի թափուր տեղ կա, որի համար մրցույթ էր հայտարարված: Դիմեցի: Ինձ հրավիրեցին նախարարություն հարցազրույցի, ասացին, որ Արցախից բռնի տեղահանված մասնագետները կարող են առանց մրցույթի ընդունվել աշխատանքի: Նոյեմբերի սկզբից էլ ընդունվեցի դպրոց որպես 2-րդ դասարանի դասվար: Երեխաների հետ աշխատանքը որոշ չափով փոխեց ներաշխարհս: Ծիշտ է, շատ դժվար է կտրված լինել Արցախից, ամեն երեխայի մեջ արցախցի իմ աշակերտներին եմ փնտրում, շատ եմ կարոտում հարազատ աշխատավայրս, բայց միեւնույն ժամանակ ուրախ եմ, որ հնարավորություն ունեն կրկին աշխատելու, հատկապես որ ընտանիքում ուրիշ աշխատող չունենք այս պահին: Հիմա աշխատում ենք նոր չափորոշիչներով, գնահատման ուրիշ կարգով, հաճելի է, երբ ընդառաջում են սիրելի գործով զբաղվելու համար: Շատ եմ սիրում նոր աշակերտներին, նրանք նույնպես լավ են տրամադրված իրենց նոր ուսուցչուհու հանդեպ:

**- Ձեր մաղթանքը հայ կանանց:**

- Ի՞նչ կարող եմ մաղթել դառնություն տեսած ու վիշտ ապրող հայ կանանց: Ոչինչ չի կարող սփոփել որդեկորույս մորը, ամուսին կորցրած կնոջը, եղբայր կորցրած քրոջը: Մաղթում եմ ուժ ու համբերություն անդիմաճալի ցավը տանելու համար: Ամենացավալիս այն է, որ չենք կարող հերոս նահատակների գերեզմաններին այցի գնալ: Վերջին շրջանում անգամ ծաղիկ չկար, որպեսզի տանեինք շիրիմներին խոնարհելու, իսկ հիմա ուր նայում են՝ շուրջս ծաղիկ է, սակայն շիրիմներին այցի գնալն է անհասանելի: Ցանկանում եմ, որ Արցախ վերադառնալու հույսը չմարի ոչ մի արցախցու մոտ: Ինչքան դժվար իրավիճակներում է եղել արցախցին, միշտ գտել է ելքը ու պատվով դուրս եկել: Հավատանք, որ մեր զավակների արդար արյունով շաղախված հողում դեռ խաղաղ ապրելու ու արարելու ենք, ինչն էլ մաղթում եմ բոլորիս:

ՀԱՍԼԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ-70

ՄՏԵՂԵՆԼՈՎ ԻՐ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅԱՐԱՆԸ

Արցախցի անվանի գրող, դերասան և լրագրող Համլետ Մարտիրոսյանի (գրական ծածկանունը՝ Մարտիրոս Որնեցի) ծննդյան 70-ամյակը վերջերս նշվեց Երևանի Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի դահլիճում:

Ստանալով բարձրագույն բանասիրական կրթություն՝ Մարտիրոսյանը նախ լուրջ հայտ է ներկայացրել բեմարվեստին: 1980 թվականին աշխատանքի է անցել Ջանգեզուրի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ որպես դերասան և գրական մասի վարիչ: Իսկ 1987թ. տեղափոխվել է Արցախ և աշխատանքի անցել Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ որպես թատերական ստուդիայի տնօրեն և դերասան: Նրան հաճախ է հոտնկայա ծափահարել թատերասեր հանրությունը: Բեմում մարմնավորած կերպարների միջոցով Համլետ Մարտիրոսյանը կարողացել է շահել հայ հանդիսատեսի սերն ու հարգանքը:

Բայց Արարիչը նրան միայն դերասանական շնորհքով չի օժտել: Արդեն 1990-ականների սկզբին նա գրականությանը լուրջ հայտ ներկայացրեց իր «Ապրում ենք, էլի» պատմվածքների ժողովածուով: Նույն այդ ժամանակահատվածում դրսևորվեց նաև Համլետ Մարտիրոսյանի լրագրողական շնորհքը: 1995-ից նա Արցախի հեռուստատեսության հաստիքային աշխատող էր և հեղինակեց մի շարք հետաքրքիր հաղորդաշարեր՝ «Իրիկնամածամ», «Ատուպ», «Գրվածք», «Արվեստանոց», «Գիր», «Մի գավաթ սուրճ» և այլն, իսկ ամենատպալվորիչը, որ աննախադեպ ժողովրդականություն ասպհովեց, Իլյա Փավլոնովիչի կերպավորումն էր համանուն եր-

գիծական հաղորդաշարում: Ցավոք, երգիծական հանրահայտ մանրաստուծներից քիչ բան է պահպանվել, արցախահայության հասցնել բռնատեղահանման պատճառով հեղինակը չի կարողացել իր հեղինակած տե-



սանյութերի արխիվները տեղափոխել Երևան: Միակ հնարավորությունը թերևս մասնավոր արխիվներից այդ մանրաստուծները հավաքելն ու ֆիլմաշարի տեսքով ամբողջացնելն է:

Մարտիրոս Որնեցին անցյալ տարվա մայիսին Ստեփանակերտում հիմնադրված Արցախյան գրական միավորման նախագահն է: Կազմակերպության խորհուրդը նրան էր վստահել նախագահի դժվար պարտականությունը՝ հիմք ընդունելով վերջինիս սկզբունքայնությունն ու անաչառությունը, ինչպես նաև հանրային հեղինակությունը: Ցավոք, միավորումը չկարողացավ լիարյուն աշխատել, որովհետև Արցախը դաժան պաշարման մեջ էր՝ դրանից բխող ծանր հետևանքներով: Այդուհանդերձ, անգամ խուլ շրջափակ-

ման մեջ Գրողների արցախյան միավորումը կարողացավ իր անդամների թվից յոթ հոգու գրքերը մատենաշարի ձևով հրատարակել Երևանում: Անշուշտ, ծրագրեր շատ կային, որոնք իրականացնելու հնարավորություններ, հուսանք, դեռ կլինեն, այն էլ՝ հայրենի Արցախում:

Հ. Մարտիրոսյանի հեղինակած որոշ հաղորդաշարեր, որոնք հեռարձակվել են Արցախի հանրային հեռուստատեսությամբ, արվեստի մասին յուրօրինակ դասախոսություններ էին: Նա հրաշալի գիտեց համաշխարհային արվեստի պատմությունը, նույնիսկ գիրք է հրատարակել կերպարվեստի աշխարհառջակ ներկայացուցիչների մասին: Մտիկից չվիճելով արցախցի նկարիչների ու քանդակագործների հետ՝ Հ. Մարտիրոսյանը կարողացել է արժանավուն ներկայացնել նրանց ստեղծագործությունները:

Հրեյնական գերեկույթին գրչնկերոջ մասին շնորհավորանքի խոսքով հանդես եկան արցախցի գրողներ Կիմ Գաբրիելյանը, Հրանտ Ալեք-

սանյանը, Դավիթ Միքայելյանը, Ջինաիդա Բալայանը, քանդակագործ Յուրի Չովհաննիսյանը: Որնեցու ստեղծագործությունները բեմից ներկայացրին Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասաններ Սամվել Եվրիյանն ու Ռուզան Գասպարյանը, գրողի դուստր Նարե Մարտիրոսյանը:

Ստեղծագործող անձի համար տարիքը ոչ



այլ ինչ է, քան իմաստության նոր աստիճանահարթակ: Եվ արդյո՞ք իմաստամալու համար կա տարիքային որևէ սահման: Դա կարող է ասել նա, ով հասել է կենսաճանաչողության ընդարձակ մի տարածքի, որտեղ կարողացել է ապահովել իր հոգևոր կացարանը՝ ներկայի ու ապագայի հասցեով:

Համոզված ենք, Համլետ Մարտիրոսյանը, նույն ինքը՝ Մարտիրոս Որնեցին, ստեղծել է և ունի իր հոգևոր կացարանը հայ մշակութային անդաստանում: Վստահանաք, որ այդ կացարանն աստիճանաբար տեսանելի կդառնա ավելի մեծ սահմաններում:

**Ջոիրաբ ԸՆԶՈՅԱՆ**  
Լուսանկարները՝ հեղինակի



ՄԱՐՏԻՐՈՍ ՈՐՆԵՑԻ

ԿԿՎԻ ԿԱՆՉԻՆ ԱԿԱՆՋ ՄԻ ԴԻՐ

(դասնված)

Ձեղնահարկում, որը միաժամանակ առանձնատան խորհանոցն էր, օգոստոսյան շոգը եփ էր գալիս: Շիկացած թիթեղյա ծածկի տակ ուր որ է բուլ էր ելնելու ամեն ինչից: Անգամ շոգբաղնիքը սրա համեմատ մասխարա էր: Եվ Սեդրակը, չնայած հազիվ մի ժամ կլիներ, ինչ ինքնական իրեն հանձնել էր ձեղնահարկի գերությանը, սակայն ամեն անգամ թաշկինակն արդեն երեսին, ծոծրակին, թիակներին քսելուց հետո մզում էր, եւ քրտնաջուրը, թափվելով տախտակած հատակին, թշշում էր, ու փոշին էր, որ խրտում էր ու զինքը կտորտում հատակից շեղորեն վեր ձգվող լույսի խրձի մեջ:

Սեդրակը տղամարդ էր, դիմացողն էր: Վերջապես իր որոշումն էր դա, եւ գիտեր, թե ինչու էր այստեղ՝ իր առանձնատան ձեղնահարկում տապ կացել. տանամայակների այս փոշու, շոգի ու բանտարկության մեջ նա գտնել էր ուզում իր կնոջ հավատարմությունը: Իհարկե, թեք աշխարհը տեղյակ լիներ այս տեսարանին, ապա ծիծաղեր պիտի այս մարդու մտածողության վրա, բայց Սեդրակը առաջվա պես ասքել այլևս չէր կարող, ինչպես նրա չարորակ ուռուցքն է դանդաղորեն սպանում կյանքը: Իր հոգում բույն դրածը ուռուցք չէր, անհաշիվ թունավոր օձերի կծիկ էր, որոնցից յուրաքանչյուրը պատեն-անպատեն առիթով խայթում էր՝ ոչ մահացու, շատ ավելի ցավ ու տառապանք պատճառելու համար: Տարիքն էլ իրենն էր անում: Ու, երեւի հենց տարիքն էր պատճառը, որ, այնուամենայնիվ, որոշեց մի

որոշ ժամանակով դառնալ Ջեյմս Բոնդ:

Ձեղնահարկում տապ կենալու համար Սեդրակը հիմքեր ուներ: Վերջին շրջանում իր եւ Նանեի ինտիմ կյանքը ինչ-որ աներեւոյթ խուրթերի էր դնում առնու, կարծես ամեն ինչ կար, սակայն չկար բերկրանքը, ինչպես առաջներում: Կնոջ վարքագծում էլ հայտնվել էին բաներ, որոնք նախկինում չկային, կամ գոնե ինքը չէր նկատել: Բացի դրանից, իր առաջարկությունը, փառաբանող ակնարկը, կնոջ մերժելու պատճառաբանությունները Սեդրակի կարծիքով անտրամաբանական էին, անհեթեթ: Կինը ամուսնու համեմատ բավականին երիտասարդ էր, գեղեցիկ: Ու մեկ անգամ չի Սեդրակը կնոջ հետ կինոթատրոն գնալիս որսացել ջահելների իր հոգում օձ գալարեցնող հայացքները: Իսկ ամենից շատ հոգին միայնակորիկի պես քչփորում էր կնոջ մի արտահայտությունը: Չասնեմ Սեդրակը սեր ուներ, բայց հաճախ էր նայում ռուսական հեռուստատեսության ցուցադրվող «Ամուսնական առազաստ» հաղորդաշարը, որի ընթացքում երկու ջահելներ ամուսիններից մեկի առաջարկությամբ թաքնված տեսախցիկների օգնությամբ հետևում, բացահայտում էին մյուսի անհավատարմությունը: Մինչ հեռուստաէկրանին սիրելիների անկողնում բռնեցված կինը՝ երեսը ձեռքերով ծածկած չքմեղանում էր ամուսնու առաջ, Նանեն, որ նույնպես հեռուստացույց էր նայում, տեղից վեր կացավ՝ ասելով. «Հիմարություն է... ըն-

դամենը ուրիշի ընտանիք են քանդում...»: Խոսքը խոսք բերեց: Եվ այդ երեկո նույնիսկ սկանդալ եղավ: Սեդրակը ոչ մի կերպ հասկանալ չէր կարողանում. պարկեշտ կինը, թվում է, փնտրել պիտի, մինչդեռ Նանեն պաշտպանում էր ամուսնուն դավաճանած կնոջը: Օրեր անց էլ, նրա կրթուտ պահվածքն այդ հարցում Սեդրակի մտքից դուրս չէր գալիս, սեպի պես խրվել, մնացել էր: Կյանք տեսած մարդ էր Սեդրակը, նա մեծության պահերին կողք կողքի էր դնում կնոջ՝ վերջին շրջանի միտուկացից առանձին պատահիկներ է... հոգին սկսում էր մզգալ օձի խայթոցից: Անկողնում էլ Նանեն առաջվա մնամ չէր, թեք մեկ երկու անգամ մերժում էր, երրորդին չէր ընդդիմանում, սակայն դա ավելի շատ պարտականության նման մի բան էր լինում, բայց ոչ զգացմունքից, սիրուց ծնված մերժեցում:

Իհարկե, Սեդրակը շատ կուլտեմար, որ իրենց քաղաքում էլ լիներ այնպիսի ծառայություն, ինչպիսին «Ամուսնական առազաստն» էր: Իսկ քանի որ չկար, ստիպված էր իրեն մտատանջող խնդիրը ինքը լուծել: Ինչ խոսք, անեկդոտի նման էլ հնչում, բայց նա իսկապես գործողվեց երեսան՝ հինգ օրով: Իսկ այսօր առավոտյան ամեն ինչ արեց այնպես, ինչպես կանի ճամփա գնացողը: Հրաշալի խաղաց, ուղղակի անթերի: Տնից դուրս գալիս էլ կնոջն ու տասը տարեկան դստրիկին պաշարող տղան: Պայուսակը, որում փոխնորդ շորերն էին ու երեսանյան հինգ օրերին պետք եկող պարագա-

ներ, նա տարավ թողեց իր աշխատասենյակում, մի որոշ ժամանակ անց վերադարձավ տուն: Այդպես էլ պիտի լիներ. կինն աշխատանքի էր գնացել՝ երեխային տանելով հետը: Սեդրակը իր բանալիքով բացեց դարպասի դուռը, ներսից կողպեց եւ աշխատեց մինչեւ տուն ընկած հիսուն ոտնաչափ տարածությունը այնպես անցնել, որ հարեւաններից տեսնող չլինի: Սակայն տուն չմտավ: Նույնպիսի հուշկությանմբ անցավ շենքի ետեւ: Ձեղնահարկ մտնելու երկու ճանապարհ կար՝ տան ներսից (այս դեպքում սանդուղքը ետ՝ իր տեղը դնող չէր լինի) եւ շենքի ետնապատի վերելի դռակից: Այստեղ էլ նա սանդուղքը դնե արեց պատին, ինքը դռակից ներս մտավ, իսկ սանդուղքը ոտքով վերջին պահին այնտեսակ հրեց, որ այն, պատին քսվելով, կողքանց սահեց ու մնաց պատի տակ մեկնված: Տղամարդը երեկ էլ էր եղել ձեղնահարկում՝ մահանա բռնած, թե գործ կար անելու: Իրականում բաց էր արել դռան մղակը, մուշտարու աչքով գնել ամեն ինչ: Այնպես որ՝ գիտեր իրեն ինչ է սպասվում «բանտարկության» ժամանակ, ուստի հիմա հետը բերել էր լիտրուկեսանոց երկու շիշ հանքային ջուր, ուտելիքով փաթեթը, որը կինը դրել էր ճամփի համար եւ կեսլիտրանոց սրճով թերմոսը:

Հնամաշ, կուտակ եղած կահույքի շարունակությունն էր կազմում մետաղյա, զսպանակավոր մահճակալը, որի գլխամասը դեմ էր առել ծխնելույզի աղյուսաշար սյանը:

Տղամարդը հենց այդ մահճակալի վրա էլ նստել էր: Իր ապրած կյանքում առաջին անգամ էր, անսովոր իրավիճակ էր, իր էությանը խորք մի բան, հետեւաբար ինչ-որ տեղ նաեւ նվաստացուցիչ էր, անպարկեշտ: Մեծության մեջ ինքն իր առաջ ամբողջովին անկեղծ էր, գիտեր, որ ինքը սուրբ չէ, տարեց տղամարդ է, սակայն դեմ չէր ուրիշ կանանց հետ սեր անելուն, ինչպես բոլոր տղամարդիկ, մինչդեռ հիմա եկել, ձեղնահարկի այս փոշու մեջ գտնել էր ուզում իր կնոջ հավատարմությունը: Մի բան էլ կար. շրջապատում, երբ խոսք էր լինում անհավատարիմ կանանց մասին, Սեդրակի հոգում չգիտես ինչու քանդվում էր օձերի կծիկը: Հակառակի պես գործընկերն էլ այնպիսի մի երիտասարդ էր, որի կյանքի իմաստը շատ կանանց հետ քննել էր: Ու երբ նա առիթի դեպքում աքլորացած պատմում էր իր ունեցած կանանց մասին, անպայման նրանց ամուսիններին կոտոշ էր կացնում: Նման պահերին Սեդրակն իրեն նվաստացած էր գտնում՝ մտածելով, որ ինչ-որ մեկն էլ, հավանաբար, նույն կերպ է խոսում իր մասին: Եվ նման պահերին էր, որ շատ էր ուզում գործընկերոջ ուղեղից կորզած լինել իսկությունը, բայց հո՞ չէր հարցնելու՝ իսկ ի՞նչ գիտես իմ կնոջ մասին...

...Չէ, բախ, ո՞վ է եղյախի բան անում..., թող մնա ճաշից հետո, - տուն մտած կնոջ ծայրը զգաստացրեց Սեդրակին:





ԽՃԱՆԿԱՐ

ՆԿԻՐՎԱԾ ՎԱՐՂԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ 75 - ԱՄՅԱԿԻՆ

Ապրիլի 19-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) ընթերցարահուն կայացավ բանասեր և հերմենևտ Վարդան Հայրապետյանի (1948–2019) 75-ամյակին նվիրված «Армянский гуманитарный вестник» ամսագրի 11-րդ համարի երկհատորյակի հատուկ թողարկման շնորհանդեսը: Ներկա էին ամսագրի գլխավոր խմբագիր Արեգ Բայանդուրը, Վ. Հակոբյանի հարազատներ, աշխատանքային ընկերներ, հյուրեր: ՀԱԻ-ի խորհրդի անդամ Տորք Դալալյանը ողջունեց ներկաներին, կարևորեց Վ. Հայրապետյանի ավանդը ներկայացվող հանդեսի կայացման գործում: ՀԱԻ-ի «Армянский гуманитарный вестник» ամսագիրը հիմնադրվել է 2006 թվականին Վ. Հայրապետյանի և ընկերների նախաձեռնությամբ ու նվիրումի շնորհիվ: Ներկայացվող համարները կազմել են Լևոն Աբրահամյանը (Երևան) և Արմեն Գրիգորյանը՝ (Մոսկվա): Վ. Հայրապետյանի մասին սկզբում խոսք ասաց պ.գ.թ., ԳԱԱ թղթակից անդամ Լ. Աբրահամյանը: Առցանց ելույթ ունեցավ Արմեն Գրիգորյանը Մոսկվայից: Վ. Հայրապետյանին ներկայացրին նաև հատորների գրախոսներ, Ռուս-հայկական համալսարանի համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի վարիչ Լի-



Լիթ Սելիքսեթյանն ու պատմաբան, բյուզանդագետ Մանե-Էրնա Շիրինյանը, աշխատակից «Разговоры о круглых и абсолютных



числах» աշխատության համահեղինակ Արա Գուլյանը, վերջին շրջանի ընկերներից Արծրունի Սահակյանը, Էլզա Գուցունովան, մորաքրոջ որդին՝ Լևոն Հակոբյանը, այլոք: Բոլորի խոսքում Վ. Հայրապետյանը եղել է մեծ մտավորական, «խիստ» բանասեր:

«Армянский гуманитарный вестник» ամսագրի ներկայացվող համարի առաջին մասը ներառում է գիտնականի տեքստերի ընտրանին՝ հատվածներ նրա «Толкуя слово» գրքից և ավելի ուշ գրած դրա լրացումները: Առանձին բաժնում ներառված էին Վ. Տոպրովի, Ս. Բոչարովի և Վ. Բիրիխինի ակնարկները երևանցի իրենց գործընկերոջ և նրա գիտական աշխատանքների մասին: Հատորի մեջ ներառվել են Վ. Հայրապետյանի և նրա երեք համահեղինակների՝ Լ. Աբրահամյան, Գ. Առաքելյան և Ա. Գուլյան, «Разговоры о круглых и абсолютных числах» աշխատանքից հատվածներ: Համարի առաջին մասը եզրափակում են Վ. Հայրապետյանի ազդեցությամբ ստեղծված ստեղծագործությունները և նրա

ուսանողների՝ Լ. Սելիքսեթյանի, Կինա Վանեսկեդյանի, Անուշ Հովհաննիսյանի, Սեդա Այվազյանի հուշերը: Համարի երկրորդ մասը ներառում է Վարդան Հայրապետյանի և ռուս նշանավոր բանասերներ Վ. Ն. Տոպրովի, Ս. Գ. Բոչարովի և Վ. Վ. Բիրիխինի նամակագրությունը, ինչպես նաև կենսամատենագիտական նյութեր և գիտնականի հետ վերջին գրույցներից մեկի ծայնագրության սղագրու-



թյուն: Նյութերի մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ: Ընթացքում էլրանցի ցուցադրվեցին երջանակահիշատակ մտավորականի լուսանկարներ՝ մեծակ և մտերիմների հետ տարբեր ժամանակներում:

Զ. ԸՈՒՇՆԱՆ

ԱՐՑԱԽՅԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԱՐԶՎԵԼ



Մանվել Պետրոսյանը ծնվել է 2004թ. մայիսի 9-ին: Արցախի համար խորհրդանշական օրը ծնված խոստումնալից մարզիկի մեծ ձեռքբերումները, մարտական ոգին ու կենսակերպն առհասարակ հաղթանակի հետ են զուգորդվում:

Բռնցքամարտել սկսել է 13 տարեկանից: Ապրելով իր ծննդավայր Մարտունու շրջանի Քերթ գյուղում՝ սկսել է պարապմունքների հաճախել Ստեփանակերտ քաղաքում՝ Արցախի վաստակավոր մարզիչ Նարեկ Աբրահամյանի մոտ: Սիրելի մարզածեուով պարապելու համար հոր աջակցությամբ Մանվելը շաբաթը մի քանի անգամ հաղթահարում էր 50կմ ճանապարհը: Ինչպես նշում է Մանվելը, շատ մարզածներ է փորձել, բայց չի հավանել, բռնցքամարտն է նրան դուր եկել: Նա սկսել է քրտնաջան պարապել, չի նահանջել դժվարությունների առջև, ձգտել է հասնել իր նպա-

տակներին: Ջանքերն ապարդյուն չեն եղել. նպատակասլաց պատանին շուտով սկսեց բռնցքամարտել ինչպես հայրենիքում, այնպես էլ միջազգային ռինգում:

2018թ. ՀՀ բռնցքամարտի առաջնության չեմպիոն է, 2018թ. Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր: 2020թ. պատերազմից հետո Մանվելը շարունակում էր մարզվել: Նրա համար խոչընդոտ չէր նույնիսկ այն հանգամանքը, որ ստիպված էր նույն ճանապարհը գալ գյուղից, սակայն արդեն այն ցավոտ տարբերությամբ, որ սեփական հողում պետք է անցներ թշնամու հենակետերի կողքով:

Բռնցքամարտի եւ սիրելի մարզչի հանդես սերն ավելի ուժեղ էր հանգամանքներից: Դժվարություններից չվախեցող, նպատակասլաց եւ ուժեղ մարզիկ Մանվել Պետրոսյանը երազում էր միշտ բարձր պահել Արցախի դրոշը ու կարողանալ օգնել, որ Արցախը միշտ կանգուն մնա:

Մանվել Պետրոսյանը 2020թ. ՀՀ բռնցքամարտի պատանիների առաջնության չեմպիոն է, 2021թ. ՀՀ բռնցքամարտի երիտասարդների առաջնության չեմպիոն, 2021թ. Եվրոպայի բռնցքամարտի առաջնության ֆինալիստ, միջազգային մրցաշարերի բազմակի չեմպիոն է:

2021թ. Մանվել Պետրոսյանը Վրաստանում մասնակցել է բռնցքամարտի միջազգա-

յին մրցումներին, որտեղ ունեցել է 3 մեծամարտ, ընդ որում՝ աղբյուրանցու հետ: Մանվելին հաջողվել է հաղթանակ տանել: Ավելին՝ Մոնթե Սելբոնյանի ծննդյան օրվա առթիվ հերոսի նկարով շապիկ էր հագել, իսկ նկարվելիս բարձրացրել էր Արցախի դրոշը, իհարկե, բողոքի արժանանալով աղբյուրանցի մրցակցի կողմից:



Մանվել Պետրոսյանը 2022թ. ՀՀ բռնցքամարտի երիտասարդների առաջնության չեմպիոն է: 2022թ. նա մասնակցել է Իսպանիայում կայացած բռնցքամարտի աշխարհի առաջնությանը, որտեղ զբաղեցրել է 4-րդ տեղը:

Արցախի շրջափակման ամիսներին Մանվել Պետրոսյանը մնացել էր Երևանում, չէր կարողանում վերադառնալ Արցախ: Մարզիչ

Նարեկ Աբրահամյանը նրան ուղղորդեց Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիա, որտեղ նա շարունակեց մարզվել հավաքականի մարզիչներ Ռոբերտ Պետրոսյանի եւ Արման Հարությունյանի մոտ:

2023թ. Մանվել Պետրոսյանը մասնակցեց Չեչենական Հանրապետությունում կայացած բռնցքամարտի միջազգային առաջնությանը՝ արդեն մեծահասակների միջև եւ գրավեց 1-ին տեղը: Մասնակցում էր մարզական հավաքների, առաջնությունների, մարզական ակտիվ կյանք էր վարում, բայց շատ էր անհանգիստ Արցախի հայրենակիցների ու Արցախի ճակատագրի համար:

Մանվել Պետրոսյանի եղբայրը նույնպես բռնցքամարտիկ է: Սեպտեմբերի 19-ի եւ հետագա տխուր իրադարձություններից հետո Մանվելի ընտանիքը բռնի տեղահանվեց՝ նույն ճակատագրին արժանացած արցախյան հազարավոր ընտանիքների նման:

2023թ. նոյեմբերին կայացած բռնցքամարտի Եվրոպայի առաջնությանը Մանվել Պետրոսյանը չմասնակցեց, իհարկե, ոչ իր կամքով:

Ներկայում Մանվելը ընտանիքի հետ բնակվում է Երեւանում: Շարունակում է մարզումները, գտնվում է լավ մարզավիճակում: Պատրաստվում է մասնակցել տարեվերջին Սոֆիայում (Բուլղարիա) կայանալիք 18-22 տարեկան բռնցքամարտիկների միջև Եվրոպայի առաջնությանը:

Արցախի մարզիկին ցանկանում ենք հաջողություն:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԽՃԱՆԿԱՐ  
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝  
«Լուսարար»  
կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան,  
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27  
E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:  
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:  
Տպաքանակ՝ 500  
Ստորագրված է տպագրության՝ 25.04.2024թ.: